ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԼՄԼԲՀ-ՄԱԱՊՁԲ-26/02

գ. Լոռի Բերդ «06» փետրվարի 2026թ.

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԱՁ Արմեն Ալեքսանյանը, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված կենցաղային ապրանքները (այսուհետ՝ ապրանք)՝ Գնորդի կողմից ներկայացված պահանջագրերի հիման վրա, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:.

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, Գնորդի կողմից ներկայացված պահանջագրերի ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, Գնորդի կողմից ներկայացված պահանջագրերի ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով՝ Գնորդի կողմից ներկայացված պահանջագրերի հիման վրա:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով և Գնորդի կողմից ներկայացված պահանջագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի **առավելագույն գինը** կազմում է **1.083.250 (մեկ միլիոն ութսուներեք հազար երկու հարյուր հիսուն)** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդո720750000ւնված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

8.4 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը:

8.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

8.6 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.9 Պայմանագիրը կազմված է 4էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Լոռի Բերդի համայնքապետարան	ԱՁ Արմեն Ալեքսանյան
ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ 7	ք.Ստեփանավան, Գ.Նժդեհի 4/1
ՀՀ 900252144028	ՀՀ 220249720750000
ՀՀ ՖՆ թիվ 1 գործառն. վարչություն	*ԱԿԲԱ ԲԱՆԿ*
ՀՎՀՀ 06954163	ՀՎՀՀ 69507975
----------Ա. Վերպիսյան	----------Ա. Ալեքսանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«06» փետրվարի 2026թ. կնքված
թիվ ԼՄԼԲՀ-ՄԱՊՁԲ- 26/02 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի										
Համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքների անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	առավելագույն քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա առավելագույն քանակը	ժամկետը***
1.	18421140	մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ	մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ տուփով, 1 տուփում՝ 100հատ	տուփ	200	16000	80	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	80	28.12.2026թ
2.	18421130	ռետինե ձեռնոցներ	Ռետինե ձեռնոցներ նախատեսված բազմզկի օգտագործման համար, որոնք պաշտպանում են ձեռքերը մաքրող միջոցների ազդեցությունից	զույգ	200	20000	100	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	100	28.12.2026թ
3.	18141100	աշխատանքային ձեքնոցներ	Ընդհանուր նշանակության լատեքսային աշխատանքային ձեռնոցներ	զույգ	250	37500	150	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	150	28.12.2026թ
4.	19641000	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	պոլիէթիլենային պարկ, աղբի համար 30լ տարողությամբ	հատ	180	21600	120	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	120	28.12.2026թ
5.	19642000	պոլիէթիլենային պարկ, սննդային	մեկանգամյա, կլոր մետրով	հատ	400	40000	100	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	100	28.12.2026թ
6.	33761000	զուգարանի թուղթ	զուգարանի թուղթ գլանափաթեթով երկշերտ Papia/Selpak	հատ	150	120000	800	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	800	28.12.2026թ
7.	33761300	ձեռքի թղթե սրբիչներ	ձեռքի փափուկ թղթե սրբիչներ գլանափաթեթով Նևա	հատ	560	123200	220	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	220	28.12.2026թ
8.	39513200	սեղանի թղթե անձեռոցիկ երկշերտ տուփով	սեղանի թղթե անձեռոցիկ երկշերտ տուփով Զառա	տուփ	320	44800	140	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	140	28.12.2026թ

9.	39513200	անձեռոցիկ (սովորական)	անձեռոցիկ (սովորական) Պալմա 50հատ	տուփ	90	9000	100	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	100	28.12.2026թ
10.	39514200	խոհանոցային սրբիչ	խոհանոցային սրբիչ եռաշերտ Նևա	հատ	470	21150	45	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	45	28.12.2026թ
11.	39514500	երեսսրբիչ	երեսսրբիչ գծավոր 50x90սմ	հատ	1 320	46200	35	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	35	28.12.2026թ
12.	39811100	օդի թարմացուցիչներ	օդի թարմացուցիչ Տանգո 300մլ	հատ	420	21000	50	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	50	28.12.2026թ
13.	39811300	հոտազերտիչ /դեզադոր/օդի	հոտազերտիչ /դեզադոր/օդի Հայաթ Ալֆա 350մլ	հատ	550	49500	90	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	90	28.12.2026թ
14.	39812410	կահույքի փայլեցման միջոց	կահույքի փայլեցման միջոց Պոլո 400մլ	հատ	600	30000	50	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	50	28.12.2026թ
15.	39812600	մաքրող միջոց	մաքրող միջոց Ռախշա	հատ	220	11000	50	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	50	28.12.2026թ
16.	39831241	օճառ ձեռքի	օճառ ձեռքի Sefeguard 125գր	հատ	420	33600	80	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	80	28.12.2026թ
17.	39831242	լվացքի փոշի	լվացքի փոշի Հոբո 450գր	հատ	310	15500	50	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	50	28.12.2026թ
18.	39831100	լվացքի հեղուկ	լվացքի հեղուկ Ֆոր Մայ Ֆեմիլի 1լ	հատ	650	13000	20	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	20	28.12.2026թ
19.	39831244	օճառ, տնտեսական	օճառ, տնտեսական 72% 170գր	հատ	220	26400	120	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	120	28.12.2026թ
20.	39831246	հեղուկ օճառ	հեղուկ օճառ Մեչտա 400մլ	հատ	650	52000	80	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	80	28.12.2026թ
21.	39831247	ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ)	ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ) Գոլրանգ 750մլ	հատ	520	36400	70	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	70	28.12.2026թ
22.	39831220	յուղը հեռացնող նյութ	յուղը հեռացնող նյութՆաշ Սադ 500մլ	հատ	690	20700	30	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	30	28.12.2026թ
23.	39221240	սպասքի չորանոց	սպասքի չորանոց պլաստմասե	հատ	1 600	16000	10	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	10	28.12.2026թ
24.	39831260	օճառի տարա	օճառի տարա պլաստմասե կափարիչով	հատ	400	8000	20	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	20	28.12.2026թ
25.	39831273	հատակի մաքրման նյութեր	հատակի մաքրման նյութ Թիթիզ 1լ	հատ	620	31000	50	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	50	28.12.2026թ

26.	39831280	ապակի մաքրելու հեղուկ	ապակի մաքրելու հեղուկ Մեչտա 500մլ	հատ	400	20000	50	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	50	28.12.2026թ
27.	39831281	ապակի մաքրման լաթ	ապակի մաքրման լաթ միկրոֆիբրա	հատ	530	37100	70	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	70	28.12.2026թ
28.	39831282	կահույք մաքրելու լաթ	կահույք մաքրելու լաթ ունիվերսալ 5 հատանոց տուփով	տուփ	300	27000	90	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	90	28.12.2026թ
29.	39831283	հատակ մաքրելու լաթ	հատակ մաքրելու լաթ սպիտակ մեծ	հատ	480	28800	60	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	60	28.12.2026թ
30.	39835000	հատակի փայտ դույլով	Հատակը մաքրող հավաքածու, դույլ՝ մզիչով, փայտը՝ խոզանակով	հատ	4 400	13200	3	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	3	28.12.2026թ
31.	39836000	ավել	ավել+ աղբը հավաքելու սավոկ՝ երկար բռնակով	հատ	2 250	45000	20	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	20	28.12.2026թ
32.	39831210	սպասք լվանալու հեղուկ	սպասք լվանալու հեղուկ Նաշ սադ 1լ	հատ	810	48600	60	գ.Լոռի Բորդ, Աշոտ Երկաթի 7	60	28.12.2026թ
33.		Ընդամենը				1083250				

Ծանոթություն: Հավելված N 1-ում նշված է առավելագույն քանակը և մատակարարումը կատարվելու է Գնորդի կողմից ներկայացված պահանջագրի հիման վրա: Գնորդի փաստացի կարիքներից ելնելով նախատեսնած քանակը ամբողջությամբ կարող է չպատվիրվել, և մինչև տարվա ավարտը չպակվիրված մասով պայմանագիրը կհամարվի լուծված: Պահանջագրի հիման վրա մատակարարված ապրանքի ընդհանուր գումարը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի 80 %-ից

ԳՆՈՐԴ
Լոռի Բերդի համայնքապետարան
ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ 7
ՀՀ 900252144028
ՀՀ ՖՆ թիվ 1 գործառն. վարչություն
ՀՎՀՀ 06954163

----------Ա. Ներսիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ԱՁ Արմեն Ալեքսանյան
ք.Ստեփանավան, Գ.Նժդեհի 4/1
ՀՀ 220249720750000
ԱԿԲԱ ԲԱՆԿ
ՀՎՀՀ 69507975

----------Ա. Ալեքսանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«06» փետրվարի 2026թ. կնքված
թիվ ԼՄԼԲՀ-ՄԱՊՁԲ- 26/02 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
Համարը	Ապրանքների անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	Կենցաղային ապրանքներ	0	300000	300000	600000	600000	600000	900000	900000	900000	1083250	1083250	1083250	1083250

ԳՆՈՐԴ
Լոռի Բերդի համայնքապետարան
ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ 7
ՀՀ 900252144028
ՀՀ ՖՆ թիվ 1 գործառն. վարչություն
ՀՎՀՀ 06954163

----------Ա. Ներսիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ԱՁ Արմեն Ալեքսանյան
ք.Ստեփանավան, Գ.Նժդեհի 4/1
ՀՀ 220249720750000
ԱԿԲԱ ԲԱՆԿ
ՀՎՀՀ 69507975

----------Ա. Ալեքսանյան
/ստորագրություն/
Կ.Տ